

Միջակայքի պարզ թվերը

Ժամանակի սահմանափակում՝ 1.5 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Տրված են n թիվը և n հատ միջակայքեր: Յուրաքանչյուր միջակայքի համար պահանջվում է գտնել այդ միջակայքին պատկանող պարզ թվերի քանակը:

Մուտքային տվյալներ

Մուտքի առաջին տողում տրված է $n \geq 1$ թիվը՝ միջակայքերի քանակը: Հաջորդ n տողերից i -րդում տրված են $l[i]$ և $r[i]$ թվերը ($1 \leq l[i] \leq r[i]$), որոնք նկարագրում են i -րդ միջակայքի՝ համապատասխանաբար ձախ և աջ ծայրակետերը:

Ելքային տվյալներ

Ելքի i -րդ տողում պահանջվում է արտածել մեկ թիվ՝ $[l[i], r[i]]$ միջակայքին պատկանող պարզ թվերի քանակը:

Օրինակ

Մուտք	Ելք
3 4 11 3 16 37 73	3 5 10
1 1 10000000	664579

Ենթախնդիրներ

- Ենթախնդիր 0 (0 միավոր) Օրինակները,
- Ենթախնդիր 1 (8 միավոր) $n \leq 100$, $r[i] \leq 1000$,
- Ենթախնդիր 2 (16 միավոր) $n \leq 100$, $r[i] \leq 10^4$,
- Ենթախնդիր 3 (24 միավոր) $n \leq 10^5$, $r[i] \leq 10^4$,
- Ենթախնդիր 4 (16 միավոր) $n \leq 10^5$, $r[i] \leq 10^5$,
- Ենթախնդիր 5 (24 միավոր) $n = 1$, $r[i] \leq 10^7$,
- Ենթախնդիր 6 (12 միավոր) $n \leq 10^5$, $r[i] \leq 10^7$: